ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1629 28.04.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի ապրիլի 27-ին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Թալինի բաժնի ՁՊՎ արձանագրել է հետևյալ հիմնախնդիրը. <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 1-ին և 2-րդ համարների ներքո գրանցված Ս.Հ.Ղ-ն և Ա.Հ.Ա-ն ձերբակալվել են Արագածոտնի ՄՎ Թալինի քննչական կոմիտեի քննիչների կողմից, կալանավորվել են Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատավորների կողմից, բայց անհասկանալի պատճառներով նրանց ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկ ուղեկցումը կազմակերպվել է ոչ թե քննիչների կամ դատավորների որոշումների հիման վրա, այլ՝ ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Թալինի բաժնի պետի գրությունների հիման վրա:

Խնդրում ենք Դիտողական խմբին պարզաբանել թե նշված գործառույթը ՀՀ օրենսդրության որ կետով է կարգավորվում:

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏՐՍ № 2186
03 05 2016 թ.

Հարգանքներով՝

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ԶԵՐՄԱԿԱԼՈՒՄ
ՄՏՐՍ № 2813
02 05 2016թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 212-1-1301 «29» 05 2016 թ.

Ձեր 26.04.2016թ. թիվ 2621/1629 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2016թ. ապրիլի 27-ին ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Թալինի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում ՀՀ ոստիկանություն ներկայացված ընթացիկ հաշվետվությունում նշված հանգամանքն ուսումնասիրվել է ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արագածոտնի մարզային վարչությունում կատարվել է ստուգում, որի արդյունքներով ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

ՀՀ կառավարության 02.04.2009թ. <<Ձերբակալված և կալանավորված անձանց ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ուղեկցման և պահպանման կարգը հաստատելու մասին>> թիվ 351-Ն որոշման 40-րդ կետի համաձայն՝ <<Ձերբակալված և կալանավորված անձանց՝ պահանջվող վայր ուղեկցումն իրականացվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի գրավոր հայտերի հիման վրա>>, այլ ոչ թե դատավորի կամ քննիչի որոշումների հիման վրա: Ոստիկանության Արագածոտնի ՄՎ համապատասխան ծառայությունը ղեկավարվել է վերը նշված իրավական ակտի պահանջներով և պատշաճ կերպով իրականացրել է ուղեկցումը:

Ոստիկանության Թալինի բաժնի հերթապահ մասի պետը <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 9-րդ սյունակում թյուրիմացաբար քննիչի գրության փոխարեն նշել է ոստիկանության Թալինի բաժնի պետի գրությունը, ինչի կախակցությամբ վերջինս նախազգուշացվել է:

ՀՀ ոստիկանության շտաբ